*Հավելված N 6*
*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*
*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14

ՀՀ ԷԵԲՊՆՋԿ «Ջրառ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար տրանսֆորմատորի և գեներացնող սարքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

| **Չափաբաժնի համար** | **Գնման առարկայի համառոտ նկարագրություն** | **Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում** | **Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/ | **Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** |
|---|---|---|---|---|
| 1 | Հոսանքի տրանսֆորմատոր | «Բիգ Էներգո» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին. սահմանված կարգով չի ներկայացվել գնային առաջարկը: |
| | | «Ալիք-Էներգո» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին. հնարավոր չէ ներբեռնել էլեկտրոնային համակարգից: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14 ծածկագրով գնումների համակարգող Ն. Նիկոլայանին:

Հեռախոս՝ 012-74-00-77:
Էլեկտրոնային փոստ՝ sevan_hr.gnum@mail.ru:
***Պատվիրատու՝ ՀՀ ԷԵԲՊՆՋԿ «Ջրառ» ՓԲԸ***

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան

08 ապրիլի 2019 թ.

ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/14 ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով ՀՀ ԷԵԲՊՆՋԿ «Ջրառ» ՓԲ ընկերության կարիքների համար տրանսֆորմատորի և գեներացնող սարքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նախագահի Ս. Մելքոնյանս, ադամներ՝ Ա. Ջալադյանս, Ա. Գևորգյանս, Ն. Համբարձումյանս, Բ. Եղիգարյանս և քարտուղար Ն. Նիկոլայանս վերոնշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված՝ մեր կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ մեզ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը չի հանդիսանում սույն ընթացակարգի մասնակից:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Ս. Մելքոնյան |
| Անդամներ՝ | | Ա. Ջալադյան |
| | | Ա. Գևորգյան |
| | | Ն. Համբարձումյան |
| | | Բ. Եղիգարյան |
| Հանձնաժողովի քարտուղար | | Ն. Նիկոլայան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3**
**ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14 ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգով տրանսֆորմատորի և գեներացնող սարքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք. Երևան | 08 ապրիլի 2019թ.
ժամը. 15:00

***Մասնակցում էին.***

Հանձնաժողովի նախագահ՝ **Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

**Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

**Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
**Բ. Եդիգարյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող )

**1. *Հայտերի բացման մասին***

---------------------------------------------------------------
(Ս. Մելքոնյան)

«ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14» ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգով տրանսֆորմատորի և գեներացնող սարքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում, 2019 թվականի ապրիլի 8-ին, ժամը 15:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց տրանսֆորմատորի և գեներացնող սարքի գնման նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | Նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Տրանսֆորմատոր հոսանքի | 14000000 (տասնչորս միլիոն) |
| 2 | Գեներացնող սարք | 300000 (երեք հարյուր հազար) |

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով իրավերով սահմանված կարգով:

**1.1.*Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը***

«ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14» ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «Ալիք-Էներգո» ՍՊԸ |
| 2 | «Յունիմայն» ՍՊԸ |
| 3 | «Բիգ Էներգո» ՍՊԸ |

**1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:**

«Ալիք-Էներգո» ՍՊ ընկերության փաստաթղթերը www.armeps.am էլեկտրոնային համակարգից հնարավոր չէր ներբեռնել: «Յունիմայն» ՍՊ ընկերությունը www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել էր հրավերով պահանջվող փաստաթղթերը: «Բիգ Էներգո» ՍՊ ընկերությունը www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել էր հրավերով պահանջվող փաստաթղթերը բացառությամբ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.3 Մասնակիցների առաջարկած գինը**

(ՀՀ դրամ)

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|
| *Չափաբաժին N1 տրանսֆորմատոր հոսանքի* | | | |
| 1 | «Բիգ Էներգո» ՍՊԸ | 9750000 | 11700000 |
| *Չափաբաժին N 2 գեներացնող սարքեր* | | | |
| 1 | «Յունիմայն» ՍՊԸ | 540000 | 648000 |

**1.4 Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու, հայտերի գնահատման մասին:**

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման ժամանակ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները՝

**«Բիգ Էներգո» ՍՊ ընկերության հայտում՝**

1. մասնակիցը չի ներկայացրել ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14 ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր (պայմանագրեր), որի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պետք է պակաս չլինի մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նմանատիպ են համարվում տրանսֆորմատորների և հարակից էներգետիկ սարքավորումներ ապրանքների մատակարարված լինելը:

2. Գնային առաջարկը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ:

**«Յունիմայն» ՍՊԸ ընկերության հայտում՝**

1. մասնակցի կողմից ներկայացված դիմումի մեջ նշված է 1-ին չափաբաժին, սակայն մասնակիցը գնային առաջարկը ներկայացրել է 2-րդ չափաբաժնի համար,
2. տեխնիկական բնութագրում նշված չէ առաջարկվող ապրանքի շարժիչի, վառելիքի տեսակի և արտադրության տարեթվի վերաբերյալ տեղեկատվություն:

***<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց՝</u>***

1. Նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացում «Յունիմայն» ՍՊ ընկերությանը առաջարկել ներկայացնելու արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկված փաստաթղթերը:
2. «Ալիք-Էներգո» ՍՊԸ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պահանջներին անհամապատասխան կազմված լինելու հիմքով:
3. Հիմք ընդունելով ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14 ծածկագրով հրավերի 1-ին մասի 4.4 կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը «Բիգ Էներգո» ՍՊԸ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել՝ գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան կազմված լինելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.5 «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14» ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:**

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին**

---

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Գնահատող հանձնաժողովի՝ հայտերի գնահատման նիստ հրավիրել 10.04.2019թ ժամը 10:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:
2. «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/14» ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ ____________ Ա. Ջալադյան

____________ Ա. Գևորգյան

____________ Ն. Համբարձումյան

____________ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար ____________ Ն. Նիկոլայան